Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Էներգո Ինվեստ Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էներգո Ինվեստ Հոլդինգ›› փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և նրա դուստր կազմակերպությունների (միասին՝ խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը* համախմբված *ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից ՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի, ներառյալ Անկախության միջազգային ստանդարտները* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ Հանգամանք

«Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲԸ-ի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի հուլիսի 1-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը* համախմբված *ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը,
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

2023թ. մայիսի 31

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. Դրամ	*Ծան.*	*2022թ.*	*2021թ.*
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	5,324,146	5,291,642
Ոչ նյութական ակտիվներ և գուդվիլ	12	658,930	850,803
Տրամադրված փոխառություններ	13	11,423	8,031
Հետաձգված հարկային ակտիվներ	10	667	80,800
Ոչ ընթացիկ ակտիվներ		**5,995,166**	**6,231,276**
Պաշարներ	14	73,750	31,403
Տրամադրված փոխառություններ	13	173,828	8,747,121
Ընթացիկ հարկային ակտիվներ		3,917	1,641
Բանկային ավանդներ	15	801,087	1,417,803
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	329,950	292,288
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	244,418	424,151
Ընթացիկ ակտիվներ		**1,626,950**	**10,914,407**
Ընդամենը ակտիվներ		**7,622,116**	**17,145,683**
Սեփական կապիտալ	18		
Բաժնետիրական կապիտալ		2,706	2,706
Պահուստներ		(158,424)	(158,424)
Կապիտալի բաշխում		(6,200,862)	(6,472,543)
Չբաշխված շահույթ		7,863,879	6,538,505
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ		**1,507,300**	**(89,756)**
Չիսկող բաժնեմասեր		897,593	902,212
Ընդամենը սեփական կապիտալ		**2,404,893**	**812,456**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	52,620	473,710
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	735,280	631,373
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**787,900**	**1,105,083**
Վարկեր և փոխառություններ	19	2,097,331	3,338,445
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	20	2,223,512	11,747,920
Ընթացիկ հարկային պարտավորություններ		108,480	141,779
Ընթացիկ պարտավորություններ		**4,429,823**	**15,228,144**
Ընդամենը պարտավորություններ		**5,217,223**	**16,333,227**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**7,622,116**	**17,145,683**

Հաստատվել և ստորագրվել է Խմբի ղեկավարության կողմից 2023թ. մայիսի 31-ին:

Արմեն Պետրոսյան
Գլխավոր տնօրեն

Շավարշ Հայրապետյան
Ֆինանսական տնօրեն -Գլխավոր հաշվապահ

5-24 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. Դրամ	***Ծան.***	***2022թ.***	***2021թ.***
Հասույթ	5	2,147,430	1,897,523
Վաճառքի ինքնարժեք	6	(650,174)	(655,002)
Համախառն շահույթ		**1,497,256**	**1,242,521**
Այլ եկամուտ	7	117,583	496
Վարչական ծախսեր		(482,126)	(409,090)
Այլ ծախսեր	8	(29,402)	(278,365)
Գործառնական գործունեությունից շահույթ		**1,103,311**	**555,562**
Ֆինանսական եկամուտ		1,096,325	1,114,793
Ֆինանսական ծախսեր		(497,959)	(388,344)
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)	9	**598,366**	**726,449**
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**1,701,677**	**1,282,011**
Շահութահարկի գծով ծախս	10	(380,922)	(235,076)
Հաշվետու տարվա շահույթ		**1,320,755**	**1,046,935**
Շահույթ և այլ ֆինանսական արդյունք վերագրելի			
Ընկերության սեփականատերերին		1,325,374	1,037,252
Չհսկվող բաժնեմասերին		(4,619)	9,683
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ եկամուտ		**1,320,755**	**1,046,935**

5-24 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. Դրամ	*Բաժնետիրական կապիտալ*	*Պահուստներ*	*Կապիտալի բաշխում*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը*	*Չհսկող բաժնե-մասեր*	*Ընդամենը սեփական կապիտալ*
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**13,190,000**		**(6,375,676)**	**5,501,253**	**12,315,577**	**48,570**	**12,364,147**
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	–	–	–	1,037,252	1,037,252	9,683	1,046,935
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**1,037,252**	**1,037,252**	**9,683**	**1,046,935**
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ							
Այլ բաշխումներ	–	–	(96,867)	–	(96,867)	–	(96,867)
Էմիսիոն վնաս		(158,424)	–	–	(158,424)	–	(158,424)
Բաժնետիրական կապիտալի թողարկում	341,000	–	–	–	341,000	–	341,000
Չհսկող բաժնեմասերով դուստր ընկերության ձեռքբերում		–	–	–	–	843,959	843,959
Բաժնետիրական կապիտալի նվազեցում	(13,528,294)	–	–	–	(13,528,294)	–	(13,528,294)
Ընդամենը Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ	**(13,187,294)**	**(158,424)**	**(96,867)**	**–**	**(13,442,585)**	**843,959**	**(12,598,626)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,706**	**(158,424)**	**(6,472,543)**	**6,538,505**	**(89,756)**	**902,212**	**812,456**
2022թ. Հունվարի 1-ի դրությամբ	**2,706**	**(158,424)**	**(6,472,543)**	**6,538,505**	**(89,756)**	**902,212**	**812,456**
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	–	–	–	1,325,374	1,325,374	(4,619)	**1,320,755**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**1,325,374**	**1,325,374**	**(4,619)**	**1,320,755**
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ							
Այլ բաշխումներ	–	–	271,681	–	271,682	–	**271,682**
Ընդամենը Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ	**–**	**–**	**271,681**	**–**	**271,682**	**–**	**271,682**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,706**	**(158,424)**	**(6,200,862)**	**7,863,879**	**1,507,300**	**897,593**	**2,404,893**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. Դրամ	***2022թ.***	***2021թ.***
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Շահույթ տարվա համար	1,320,755	1,046,937
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով		–
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից օգուտ	(109,721)	
Մաշվածություն և ամորտիզացիա	436,788	437,970
Ոչ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստներ	–	224,042
Վնաս հիմնական միջոցների օտարումից	–	31,912
Վնաս ոչ նյութական ակտիվների օտարումից	4,000	
Զուտ ֆինանսական (կորուստ)/օգուտ	(598,366)	(726,449)
Շահութահարկի գծով ծախս	380,922	235,075
Փոփոխություններ հետևյալ հոդվածներում.		
Պաշարներ	(42,349)	(6,952)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(37,661)	(65,779)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(9,524,320)	(28,979)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը	**(8,178,149)**	**1,151,704**
Վճարված շահութահարկ	(350,582)	(194,095)
Վճարված տոկոսներ	(167,370)	(307,565)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	**(8,696,961)**	**650,043**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(276,419)	(25,490)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(5,000)	(5,985)
Դուստր ընկերությունների ձեռքբերում՝ առանց ստացված միջոցների	–	(303,643)
Տրամադրված փոխառություններ	(948,979)	(4,200)
Տրամադրված փոխառությունների մարում	8,780,661	47,880
Ստացված տոկոսներ	1,407,990	91,511
Բանկային ավանդների տեղաբաշխում	(1,304,871)	(1,983,426)
Մուտքեր բանկային ավանդներից	1,747,541	2,444,283
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	**9,400,922**	**260,931**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	935,479	1,040,998
Վարկերի և փոխառությունների մարում	(1,822,780)	(1,558,196)
Բաժնետոմսերի արժեքի վճարում	–	(104,000)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	**(887,301)**	**(621,198)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**(182,480)**	**289,776**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	424,151	145,478
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	2,748	(11,103)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**244,418**	**424,151**